# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2022թ. մայիսի 10-13–ը Լեհաստանի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Տիգրան Գաբրիելյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Լեհաստանի Հանրապետություն՝ ք. Լոդզ, 2022թ. մայիսի 10–13–ը:

4. **Հրավիրող կողմը՝**

   Միացյալ Ազգերի Կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO):

5. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն Միացյալ Ազգերի Կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային 33-րդ համաժողովին:

6. **Քննարկված թեմաները՝**

   Համաժողովին քննարկվել են՝

   - Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում ագրոպարենային համակարգերի առաջնահերթ խնդիրները, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների օգտագործման միջև օպտիմալ հավասարակշռության ձեռք բերման հնարավորությունները,

- Առողջ սննդակարգի խթանման առաջարկությունները և գյուղատնտեսության ու սննդի համակարգերում ներդրումները՝ բոլորի համար մատչելի, առողջ սննդակարգ ապահովելու գործում,
- Տարածաշրջանային և գլոբալ քաղաքականության և կարգավորման օրակարգային հարցեր,
- Օրակարգային 8–րդ կետի շրջանակներում քննարկվել է ERC/22/15 որոշման մեջ ընդգրկված Ուկրաինայի և Ռուսաստանի Դաշնության հակամարտության ազդեցությունները համաշխարհային պարենային անվտանգության և գյուղատնտեսության վրա, ներառյալ պարենի համաշխարհային գների բանաձևը,
- 2020-2021 թվականներին տարածաշրջանում իրականացված աշխատանքի արդյունքները,
- 2022-2025 թվականներին կատարվելիք հետագա աշխատանքների առաջնահերթությունները, որոնք արտացոլում են COVID-19-ի հետևանքները:

- **7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Միացյալ Ազգերի Կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային 33-րդ համաժողովին մասնակցել է 261 պատվիրակ, այդ թվում՝ ինը նախարար, ութ փոխնախարար, պետքարտուղարներ և 52 անդամ պետությունների ներկայացուցիչներ: Մասնակիցների ցանկում էին նաև՝ անդամ երկրներից մեկական դիտորդ, վեց ՄԱԿ-ի կազմակերպություն, 16 միջկառավարական կազմակերպություն, երկու Միջազգային հասարակական կազմակերպություն, քաղաքացիական հասարակության վեց ներկայացուցիչ, ութ ներկայացուցիչ մասնավոր հատվածից և հինգ ներկայացուցիչ գիտական և հետազոտական ոլորտից:

Համաժողովը բացել է Լեհաստանի փոխվարչապետ, գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման նախարար Հենրիկ Կովալչիկը: Ողջունելով համաժողովի մասնակիցներին, փոխվարչապետը նշել է, որ իր երկիրը հանդիսանում է գյուղատնտեսական երկիր և իրենց համար մեծ պատիվ է հյուրընկալել FAO-ի համաժողովը արտադրության ոլորտում հարուստ պատմություն ունեցող Լոդզում: Փոխվարչապետը մատնանշել է FAO-ի դերը՝ ընդգծելով, որ կազմակերպության Եվրոպայի 33-րդ տարածաշրջանային համաժողովը գյուղատնտեսության և պարենային անվտանգության հարցերի շուրջ քննարկումների համար կարևոր հարթակ է:
Համաժողովին ելույթ է ունեցել նաև Լեհաստանի արտգործնախարար Զբիգնև Ռաուն, FAO-ի Գլխավոր քարտուղար Քու Դոնգյուո, Եվրոպական հանձնաժողովի

գյուղատնտեսության հարցերով հանձնակատար Յանուշ Վոյցեխովսկին և Լոդզի քաղաքապետ Տոբիաս Բոչենսկին:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Համաժողովի վերջում ընդունվել է համաժողովի հաշվետվությունը և որոշվել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) Եվրոպայի 34-րդ տարածաշրջանային համաժողովի տեղը և վայրը:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը՝**

18.05.2022թվ.